ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԵՐ

Ս.Տ.ՍԱՂՈՒՄՅԱՆ

Վիմական արձանագրությունները չափազանց կարևոր ստույգ և անզուգադիր տեղեկություններ են պարունակում Հայոց պատմության ամենաբազմազան հարցերի վերաբերյալ: Մասնավորաբար, դրանցում արտահայտված է երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական կացության իրապատկերը, վարչակառավարչական ապարատի կառուցվածքը, հարկապարտությային և ջրօգտագործման դրվածքը, սեփականաշնորհման միտումները, իրավական նորմերի, ժողովրդական կենսափիլիսոփայության, ժամանակի լեզվամտածողության, խոսվածքի, բարբառների, փոխառությունների, տեղաշարժերի, զբաղմունքի ու անեծքի հնչերանգները, հանգամանքներ, որոնք հազիվ թե կարելի է նույն որոշակիությամբ ու հստակ սահմանումներով դիտարկել մշակութային ժառանգության մի այլ ասպարեզում: Առ այսօր պատմական Հայաստանից ու գաղթօջախներից հավաքված են ավելի քան տասը հազար վիմագիր, իսկ ևս ավելի քան 20 հազարի վերծանումն ու հրատարակումը մնում է հրատապ խնդիր: Եվ եթե, կարծրացած սովորությամբ, շարունակվի միջոցների խնայողության դիմել հենց այս բնագավառում, ապա հայագիտության կրելիք վնասն անդառնալի կլինի: Ստորև ներկայացնում ենք Սյունիքի մարզից մեր ժողոված անտիպ վիմագիր պատառիկներից 55-ը ամենևին սպառված չհամարելով Սյունիքի վիմագրերի հրատարակման թերավարտ գործը:

ՏԱԹԵՎ

Սյունիքի միջնադարյան հոգևոր-մշակութային կենտրոնի ցայժմ հայտնի 92 վիմագրերն արժանահավատ տեղեկություններ են հաղորդում վանքի ու հարակից շինությունների կառուցման, նորոգումների, նվիրատվությունների, կալվածքների, վանահայրերի ու մտավորականների մասին: Դրանց հավաքման, վերծանման ու հրատարակման խնդրին առավել հանգամանորեն ու դիտական պատշաճ մակարդակով մոտեցել է հմուտ վիմագրագետ Ս.Բարխուդարյանը: Նա ի մի է բերել նաև այլուստ հրատարակվածները[1], որոնց մի մասը, ինչպես նկատել է նա, «այժմ տեղում չկան (փլատակների տակ են մնացել, կամ, շարժական իրերի վրա գտնվելով տարվել են)»[2]: 1931թ. երկրաշարժից 40 տարի անց, պատմաբան Ա.Քալանթարյանը վանքի փլատակները մաքրելիս վերստին լույս աշխարհ

---

[1] *Դիվան հայ վիմագրության, կազմեց Ս.Գ.Բարխուդարյան, պրակ II, Ե., 1960, էջ 11 - 39:*

[2] *Նույն տեղում, էջ 35: Մնացյալ կորածները, եթե ոչ լրիվ, կգտնվեն շահագրգիռ որոնումների դեպքում:*

հանեց Ստ.Օրբելյանի պատվերով ձուլված Մեծ զանգերը[1]: Արձանագրված մի քանի բեկորներ ու խաչքարեր էլ տարվել են Գորիսի թանգարան:

Հուշարձանների վերաշինության ընթացքում ի հայտ են եկել ինչպես կորած համարվող, այնպես էլ աչքից սպրդած մի շարք վիմագրեր, որոնց հրատարակումը ևս մի քայլ է Տաթևի փառաբանված կենտրոնի պատմական ուղու ուսումնասիրության բնագավառում:

Նորահայտ վիմագրերից մի քանիսը նախնական տեղում են, իսկ մի քանիսը տեղահանված են: Դատելով քարերի չափերից, ատաղձից, տաշվածքից, հարդարանքի ոճից՝ կռահելի է, որ դրանց մի մասը Պողոս-Պետրոս եկեղեցու և կից սրահի ժամանակակիցն են (X-XIդդ.), իսկ մնացյալները՝ Գր.Լուսավորիչ առաջնակարույց եկեղեցու: 1138թ. երկրաշարժի ուժգին հարվածից «Տաթևի մեծ եկեղեցու գմբեթն իր բոլորաձև շրջանակով թռավ ու ընկավ սուրբ Գրիգոր եկեղեցու և բակում գտնվող գավթի վրա ու ամբողջը փլցրեց»[2]: 1295թ. Ստեփանոս Օրբելյանն ի հիմանց չինում է թեքակտուր Լուսավորիչ աղոթարանը, որի ընթացքում (և ավելի ուշ) հնի արձանագիր բեկորներն ու խաչքարերը դրվել են պատահական տեղերում, անգամ մխրճվել լիցքի մեջ: Դրանք ևս ի հայտ են եկել նորերս:

Երկրորդական, ոչ էական, մանրմունր թվացող, ցայժմ աննկատ մնացած կարճառոտ հիշատակագրություններից մի քանիսն էլ բացահայտում են ազգային փառքը կռող քարգործ և շինարար վարպետներ (որպիսիք Տաթևում գոհ[illegible]ե չեն դիտվել), որով ավելի է բարձրանում այդ վիմագրերի գիտական ու փաստագրական արժեքը: Անիմաստ համարելով ցաքուցիր վիմագիր պատառիկների դասակարգման փորձը, դրանք ներկայացվում են ըստ գտնվող տեղերի՝ դյուրացնելու որոնողի գործը:

Վանքի պարսպակից շենքերից մեկի բակ նայող որմածքի մեջ խցկած խաչքարի ստորին մասում հստակ գրված է. ՝ՅՈՎ՝ՀԱՆԷՍԻ ՁԵ՝ՌԱՄՔ: Վարպետի անվան սկզբնատառերը (այլ բառերի շարքում) եղել են կոթողի վերին շրջանակին, որը կտրվել է շարքի բարձրության համեմատ: Տառերը հին են, գեղագիր: Այս խաչքարի առավել շքեղ ու կատարյալ երկվորյակը (ականթներ, եռաբողբոջ թևեր, խորանի ներլցում խաղողաորթով) ի սկզբանե ազուցված է Պողոս-Պետրոս տաճարի (895 - 906թթ.) արևմտյան ճակատին՝ ի հիշատակ եկեղեցին կառուցող Հովհաննես եպիսկոպոսի: Իրապես այս խաչքարերը համաժամանակյա են և հորինված են մինչև 906թ., ձեռամբ Հովհաննեսի: Հովհաննես թեմակալն ու Հովհաննես արվեստագետը դավանանքի խորհրդանիշ խաչը համադրել են խաղողաորթ դրախտածառին, այն «ծածանել» տաճարի մուտքի գլխին, աղոթարանը նույնականացրել դրախտին, ինչը բացառիկ շքեղությամբ ու յուրովի հորինվածքով դրսևորվել է Օախաց քարում (1041թ.) և Գեղարդավանքում (1215թ.): Սա հույժ կարևոր և ուշադրության չարժանացած մի խնդիր է, որին կանդրադառնանք ուրիշ առիթով:

Առաքյալների եկեղեցուն հարավ-արևմուտքից կցված ավերված սրահի երրորդ կամարաոտքի պարզ խաչաքանդակի աջ թևում գեղատառ գրված է. ՁԳՐԻԳՈՒՐ ԿԱՆԿՆՈՂ ԽԱՉԻՍ ՅԻՇԵՑԷՔ: Գրիգորը սրահը

---

[1] Ա.Ա.Քալանթարյան, Տաթևի վանքի զանգերը և նրանց արձանագրությունները (Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Ե., 1974, էջ 115 - 118):

[2] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 283:

կառուցող-հարդարող վարպետներից է (ամենևին ոչ նվիրատու), որի անունը դրոշմված է նշմարելի տեղում:

Սրահի փլատակներից հանված, այժմ ընկած երեսակալի վրա, անունը միատառ փակագրով գրված է. ՎԱՐԴ Ք(ԱՐԴՈՐԾ) ՅԱՂԱԻԹՍ (ՅԻՇԵՑԷՔ): Կոչման քարգործ վերականգնումը երկմտություն չպիտի հարուցի, քանի որ սպասավոր (քահանա) լինելու դեպքում անունը կփոխվեր (Վարդան): Վարդ անվամբ քարգործներ կան և այլուր (Գառնի, Սաղմոսավանք, Լոր): Ոչ ցայտուն տեղում հաճախ էր փակագրվում ճարտարապետի անունը: Հետևցնելի է, որ Վարդը Գրիգորի հետ Սրահը կառուցող վարպետներից է (XIդ.):

Սրահում գտնված երկու գծախաչերով երեսապատ քարերի վրա կարդում ենք. ա) ...ԻՄ|...ՐԲԱՐԵԽ|ԱԻՍ ՈՒԿԱՆԱ (Ուքան). գրերը ջնջված են: բ) ՁՄԽԻԹԱՐՑ|ԻՇԵՑԷՔ Ի| ՔՐԻՍՏՈՍ: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է մանր ընծայատուներին և նրանց կողմից արված ինչ-որ ծառայության հատուցմանը:

Պատի երեսակալի՝ վերից ողկույզներով ու ոստերով, ներքևից չղջիկաթև-գորտաթաթ ու ականթե զարդերով խաչերի տակ. ՈԿԵ(1216). ՅԻՇԵԱՅ Ի ՔՐԻՍՏՈՍ| ԱՐՍՈՒԱԾ ԶԳԵՐԳ ԵԻ ԶԱ|ՄՈՒՄՆԻ ԻԻՐ ԵԻ| ՈՂՈՐՄԵԱՅ: ՅԱԱԶ ԻԱԶ ԿԱԶՄՈՂՍ ՅԻՇ|ԵՑԷՔ: Յաւազը (Այվազ) տաճարը կամ սրահը նորոգող (և խաչերը փորագրող) վարպետներից է, անշուշտ:

Սրահի արևելյան որմնամույթին դիմհարած, քայքայված-հողմնահարված խաչքարի քիվին. ԻՇԽԱՆԻՆ ԱՍՊԱՏԱ ԼՈՅՍ ԵԻ ԿԵԱՆՔ: Թիկունքի արձանագրությունը չեմ կարդացել: Կարծում եմ, այս ՊԵՐՄ, սրտաբուխ մաղթանքն ուղղված է Աշոտի որդի Սմբատ Թագավորին, որի օգնությամբ վանահայր Հովհաննեսը 1048թ. կառուցել է սրահը:

Վեհարանի հյուսիսային պատին ագուցված IX - X դդ. խաչքարի թևերի մեջ՝ ՅԻՇԵԱ|ԱԲՐՀԱՄԱ| Զ|ՍՈՒՐԲ| ԳԵՈՐԳ:

Արևելյան եզրի կոպտակոփ չարվածքով սենյակներից մեկի մուտքին ճակատակալ դրած, մարդու հարթաքանդակով տապանաքարին, խոշորատառ. ՀԱՅՍ Է՝ Հ(Ա)ՆԳԻՍ ՄԱԹԻՈՍԻ:

Պարսպակից արևելյան շենքի հյուսիսային պատի երեսակալի խաչը ներփակող խորանի երկու կողմում, պարզ ու գեղեցիկ տառերով. ԿԱՆԳՆԵՑԱԻ ԽԱՉՍ Ի ՓՐ|ԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈ ԿԱՐԱՊ|ԵՏ Ք՝Ա՝Հ՝ԱՆԱ՝Ի. ՈՐՔ ԵՐԿՐՊ|ԱԳԷՔ ՅԻՇԵՑԷՔ| Ի ՔՐԻՍ|ՏՈՍ: Ի ԹՎ.ՊԽԵ: (1396): Նույն տեղում, գծախաչի կողքերին, մանրատառ. Մ՝Ա՝ՐԻ(Ա)Մ, ԴՇԽՈ(Ա)|Տ՝Է՝Ր Յ՝Ո՝ՎԱՆՍ (ՅԻՇԵՑԷՔ):

Շրջապարսպի արևելյան հատվածի որմածքի մեջ հագցված բեկորների վրա. ա) Խաչերի թևատակին. Թվ...|Ս(ՈՒՐ)ԲՆ Յ|ԱԿՈԲ:| Ս(ՈՒՐ)ԲՆ ՈՎԱ|ՆՆ|ԷՍ (XIIդ.), բ) Շրջված քարին, մանրատառ. Ես՝ Փիրիճան... իշեցէք ի Ք՝ՐԻՍՏՈ՝Ս:

Նախորդներից քիչ աջ, թերևս XIVդ. խաչքարի պատվանդանի վրա. ԿԱՄԱԻՆ Ա՝ՍՈՒԾՈ՝Յ ԵՍ՝ ՈՀԱՆԷՍ ԱԲԵՂԱ|, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՎԱՐՊԵՏ|ԻՆ ԻՄՈ ՈՎԱՆՆԷՍ Ք՝Ա՝Հ՝ԱՆԱ՝Ի, ՀԱ|ԻՐՆ ԻՄՈ ԷԼ՝ ՄԷԼԻՔԱ, ՄԱԻՐ|Ն ԻՄՈ ԶՈՒԼԱԼԱ ԵԻ ԵՂԲԱԻՐՆ| ԻՄՈ ԿԱՐԱՊԵՏԻՆ ԵԻ ՅԻ|ՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՄՈ: Հովհաննես (Ովանէս) աբեղայի ծնողների անունները մասամբ եղծված են, վերծանումը թեական է:

Կրկնահարկ սեղանատան ներսում, պատից դուրս ցցված քիվագոտու վրա, մեկ տողով, որն սկսվում է արևելյան պատի հյուսիսային ծայրից և ավարտվում արևմտյանի աջ եզրում. Ի ԹՎԻՆ ՀԱՅՈՑ: ՌՃԻԸ: (1679) ԱՄՆ. ԵՍ՝ ՋԱՔԱՐԻԱՑ ՎԱՐԴԱՊԵՏՍ, ՇԻՆԵՑԻ ՋԱՅՍ ԱՅՎԱՆՍ ԵԻ ՋԽՈՒՑՍ Ի ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ԻՄՈՑ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԱՆՁԻՆ ԻՄՈՑ ԵԻ Ց՝ԱԻԱՏԱՑԵԼ՝ՈՑՆ ԱՄՆ,ԱՑՆ, ԴԱՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵԻ ՊԱ՛ՇՏ՝ ՈՆԵԻՑ, ՈՐ ՅԵ՛Տ՝ ՄԵՐ ՆՍՏԻՔ ԱՍՏ ԵԻ ՎԱՅԵԼԻՔ. ՅԻՇ,Ե,Ց,Է,Ք Ի Ք,ՐԻՍՏՈ,Ս ՋՏԱՌԱՊԵԱԼ ԵԻ ՋԱՆԱՐԺԱՆ ՋՏԷՐ ՋԱՔԱՐԻԱՑ Ի ՄԱՔՐԱՓԱՅԼ ՅԱՂՕԹՍ ՋԵՐ: Գուցե թե տարօրինակ է, բայց փաստ է, որ ընդարձակ ու դյուրընթեռնելի այս կարևոր վավերագիրը վրիպել է տեղագրողների աչքից և աննկատ են մնացել մորմոքուն՝ զտառապեալ և զանարժան հովվապետ Զաքարիայի թափած ջանքերը, որը 1679թ.՝ մեծ շարժի տարում, շինել է Տաթևի վանքի սեղանատունը (այվան) և նկուղ-թաքստոցը (խուց), որոնք գործարկվել են 250 տարի շարունակ՝ առանց որևէ փոփոխության:

Կցակառույցներից մեկի միջանցքում նկատվում է. ԹՎ՛ԻՆ՝ ՌԻԾ [1000 + (2 X 100) + 551 – 1751], որը վերագրում եմ նորոգմանը:

Գր.Լուսավորիչ եկեղեցու վերաշինության ժամանակ (1980-ական թթ.) չոր լիցքի թանձրույթից հանվել են 6 խաչքար ու այլևայլ բեկորներ[5]: Խաչքարերից մեկի քիվին ծալապատիկ նստած, քսակն աջում, իսկ ցածում ախոյանին նիզակով շամփրած հեծյալի հարթաքանդակները կատարված են բարձր վարպետությամբ: Մյուսի ողջ մակերեսն ու հարավային կողքը պատված է արձանագրությամբ. ԵՍ՝ ԴԱԻ|ԻԹ ՔԱՀ,ԱՆԱ,|ԿԱՆԳՆԵ|ՑԻ ՋԽԱՋՍ| ՀՐԱՄԱՆԱՒ ՍԻՒՆ|ԵԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ՝ Տ՛ԵԱՌ՝Ն ՅԱԿՈԲԱՑ ԵԻ ՀԱՒՐ| ՎԱՐԴԱՆԱ՝|ՏԱՆՍ ԱՌԱՋ|ՆՈՐ՛ԴԻ Ե|Ի ԵՐ ԱՆ|Ե|Լ|ՁԻ:| ՅԻ|ՇԵ|ՑԷ|Ք Ի|՝ՔՐԻՍՏՈՍ՝| ԴԱԻԻԹ ՔԱՀ,ԱՆԱ,, ՍՊԱՍԱՒՈՐՍ| ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՄ՝: Դավթի խաչքարը թեև թվագրված չէ, սակայն ոճական հատկանիշներով (ականթներ, խնձորաթևեր) բնորոշ է X դարին: Հիշատակված եպիսկոպոս Հակոբը (918 - 958թթ.) Հովհաննես Դրասխանակերտցու եղբորորդին է, համբավ վաստակած եկեղեցական գործիչ, որը մեծ եռանդ գործադրեց Սյունյաց թեմի և Տաթևի առաջնորդարանի բարգավաճման համար: Նա էր, որ «Ֆրանկ ժողովրդի հեռավոր աշխարհից բերել տվեց նկարիչներ և զոռախներ, այսինքն՝ պատկերագործներ, և աստվածաբնակ տաճարի լուսաճեմ հարկերը ամբողջովին, վերևից մինչև ներքև, անսահման ծախսերով նկարազարդել տվեց»[6]: Թեմակալ Հակոբ եպիսկոպոսը 932թ. «իշխան Փիլիպեից գնում է Զագեձորի Վարարակն կոչված ջուրը տասներկու հազար դրամով և մեկ փայլուն ջավահիրով, որի արժեքն ու որպիսությունը շատերը չգիտեին: Շատ չարչարանքով ու մեծամեծ ծախսերով ջուրը բերել էր Զագեձորի լեռներից ու հասցրել մինչև Ցաքուտ, որը գտնվում է գետի այն կողմում, վանքի դիմաց: Այնուհետև քարքարոտ ու փշալից այդ ամբողջ վայրը դարձրեց վարդաստան ու ծառաստան: Տնկեց բազմաթիվ այգիներ, ազնիվ տեսակի խաղողի որթեր, զանազան պտղաբեր ծառեր՝ ձիթենիներ, նռենիներ, բոլոր մրգատու ծառերով զարմանալի դրախտ դարձրեց, խիստ ընդարձակ ամբողջ վայրը զարդարեց թանձրախիտ ծառերով ու գեղեցկաճյուղ որթատունկերով՝ միաբանության վայելքի և բոլոր կարոտյալների ու

[5] Դրանք խնամքով հանել է վերականգնող ճարտարապետ Ալիկ Անանյանը:
[6] Ստեփանոս Օրբելյան, էջ 228:

աղքատների կարիքների համար»[7]: Այստեղ նա չինում է նաև «գմբեթահարկ մի խորան՝ շատ հրաշալի կառուցվածքով», - տարեգրում է Սյունյաց պատմիչը՝ այս անցքերից 865 տարի հետո:

Բեղմնավոր և եռանդոտ Հակոբ եպիսկոպոսի մասին սա միակ վիմագիր հիշատակագրությունն է և այս առումով էլ արժանի է հատուկ հոգածության:

Նույն տեղից հանված, զույգ խաչերով երեսակալ քարի վրա, երրորդ տողը և աջ եզրի գլխիվայր տառաշարքը՝ ծեծած-ջարդած. ԻՇԵԱՅ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ Զ՝ՎԱՐԴԱՊԵՏԻՍ Զ|...|....|....| (XIIդ.):

Պարսպից դուրս, գյուղ տանող ճանապարհի եզրի կոթողի գերեզմանոցի նորաբաց հարթ սալատապանների վրա. ա) խոշորագիր, գեղատառ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՌԱՔԵԱԼ ՔԱՀԱՆԷԻ: բ) Մարդու գծապատկերով. ՀԱՆԳԻՍՏ ՍԱՒԼԹԱՆԻՆ.

Դեռևս 1882թ. Ա.Երիցյանի հրատարակած նյութերում հանդիպում է Գր.Լուսավորիչ եկեղեցուց հարավ մատնացուցված "Сия гробница Тер Ованеса (по преданию астронома) год 950 (1501)". «Այս է տապան Տեր-Յովհաննէսի. Թվին:ՋԾ:» տապանագիրը, որը գրանցվել է տեղում չեղածների թվում: Սրահը մաքրելիս Գրիգոր Տաթևացու Դամբարանի հարևանությամբ բացվել է հովվապետական դավազանով սալ՝ երկտող տապանագրով. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ Տ՝Է՝Ր ՈՎԱՆԻՍԻ, ԱՆ|ԱԽ՝Թ Փ՝ԱՍՐԱՑ ՓԱԿԱԿԱԼՄ: Թվ. ՋԾ (1501): Թերևս նույն արձանագրությունն է, բայց տարակուսելի է մնում տեր Հովհաննեսին, ռուսերեն տեքստում, աստղագետ՝ "по преданию астроном" վերագրումը և չեմ կարծում, թե երկմտելի «անախտ փասրաց» կապակցությունն այդ իմաստն է պարունակում: Գուցե թե անախթ-ը չփոթվել է պահլավերեն ախտար (աստղագուշակ) բառի հետ, բայց ան ժխտական մասնիկը հակառակն է հուշում, և, կարծում եմ, այստեղ անհաղթ բառն է: Կամ անախտ (անբիծ, սուրբ):

Սրահի արևմտյան մույթի կամարաոտք-խաչքարի համառոտ հիշատակագիրը հայտնի է ՅԻՇԵԱ Ք՝Ս ԶՀՈԱՆՈ[Հ]ԵԻ ՈՂՈՐՄԵԱ տեքստով: Տարամտությունը փարատելու նպատակով հրատարակիչը ծանոթագրել է. «Հնարավոր է կարդալ նաև՝ ...ԶՀՈՄՆ:ՈՀ:ԵԻ ՈՂՈՐՄԵԱ»[9]: Խաչի տակ և աջ կողմի գրերը վերադիտելուց հետո առաջարկում եմ ԻՇԵԱՅ Ք՝ՐԻՍՏՈՍ ԶՀՐԱՆ|ՈՇ ԵԻ ՈՂՈՐՄԵԱ ընթերցումը՝ հարազատ մնալով քարի վրայի անեղծ, դյուրավ ընթեռնելի տառաշարքին: ՈՀ (1221) թիվն արհեստական և անստույգ է, իսկ արձանագրությունը սրահի տարեկիցն է (1048թ.):

XVII դարի նշանավոր հոգևոր գործիչներից Սյունյաց թեմի առաջնորդ Ներսես Բարունապետը թաղվել է Պողոս-Պետրոս եկեղեցու բակում: Տապանագիրը մեզ է հասել Ս.Ջալալյանցի ընթերցմամբ, որից քաղել են Լ.Ալիշանը, Ե.Լալայանը, և նույնությամբ ներմուծվել է «Ռիվանի» մեջ[10]: Կորած համարվող շիրմաքարը վերջերս հանվել է 1896թ. տաճարին

[7] Նույն տեղում, էջ 226:
[8] Նույն տեղում:
[9] Դիվան Հայ վիմագրության, պրակ II, էջ 39, № 90:
[10] Նույն տեղում, էջ 86, № 75:

կցարկված եռահարկ զանգակատան հարավ-արևմտյան մույթի հիմքից: Դա եռաստիճան «խարիսխներով» բաց վարդագույն խոշոր քար է՝ հովվապետի գավազանով ու քառատող արձանագրությամբ: Քաշքշելու հետևանքով որոշ տառեր ջարդվել են, որոնց վերականգնումը, սակայն, բարդություններ չի հարուցում: Տալիս եմ արձանագրությունը ներկա վիճակով՝ շտկելով ոչ էական վրիպումներն ու լրացնելով բացթողումները.

1. Ի ՅԱՅՍ ՏԱՊԱՆ ՔՆԱՐԱՆ՝Ի, Կ՝ԱՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՆՇԽԱՐ ՄԵԾԻ՝

2. ՆԵՐՍԷՍԻ, ՐԱԲՈՒՆԵԱՑ ՊԵՏԻ ԵՒ ԵՊ՝Ի՝ՍԿՈՊՈՍ ՍԻՒՆ՝ԵԱ՝Ց ՆԱՀԱՆԳԻ,

3. ԳՈԼՈՎ ՏԵՂԵԱՒ ՏԱԹԵՒԱՑԻ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՅՆ ՇԻՆՕՂԻ[11].

4. ԵՂԵՒ ՓՈԽԵԱԼ Ի ԿԵՆԱՑՍ ԱՍՏԻ: ՌՃ; ԵՒ Դ՝ԹՊԻՒ: (1655):

ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ: Ջալալյանցը տապանագիրը տողատել-վերածել է ութատող բանաստեղծության, իսկ տարեթիվը կարդացել է «Ռճերարդ Թուի» (1651), որը, բնականաբար, ընդունվել ու ճանաչում է ստացել:

Գր.Լուսավորիչ եկեղեցու առջևի փլվածքները մաքրելիս բացվել է նաև Մկրտիչ Լեհացու «կորած» տապանաքարը[12]:

Երկրաշարժի պատճառած հարվածներից թեև տապանագրերը վնասվել են, սակայն այն հավաստիաբար կարդացվում է.

1. ԱՑՍ Է ՀԱՆԳԻՍՏ Տ՝Է՝Ր ՄԱԿ

2. ՐՏՋԻ, ՈՐ Ի ԼԷՀԱՑ ԵԿԵԱԼ ԼԻՆԻ,

3. ԱՍՏ Մ՝ՈՒՐ՝Բ ԿՈՋՆԻՒՔ ԱՌ Տ՝Է՝Ր Փ-

4. ՈԽԻ: ՌՃ ԻՆՆԵԱԿ ԹՈՒԻ (1660):

Ս.Ջալալյանցը վերադասավորել է իրական տողաշարքերը, երրորդ տողի կոչնիւքը (հրավեր, աստծո կանչ) կարդացել է կրօնաւորք, որը տվյալ իրադրության մեջ, հազիվ թե ընդունելի է:

Անդրադառնանք նաև Լուսավորիչ աղոթարանի արևմտյան պատի հինգ եզրաքարերի երկու նվիրագրերին, որոնք պատմագրության ասպարեզ են ներմուծվել անիմաստ, կիսատ-պռատ տեքստերով: Շատ հազվադեպ այս պարտավորագրերի առաջին «սուրահի» ավելի քան 30 բառերից 10-ը կարդացել է Ա.Երիցյանը, որոնցից երեքը՝ ճիշտ[13]: Օրգանական շարունակությունը կազմող երկրորդ «սուրահը» ջանացել է իմաստավորել Ս.Բարխուդարյանը, բայց անհաջող[14]: Հիմա, երբ լուրջ վնասվածքներ ստացած պակասող քարերը գտնվել և տեղակայվել են նախնական տեղերում, անհամեմատ դյուրին է լրացնել-ամբողջացնել շարադրանքը և հասու լինել իմաստին:

Առաջին սուրահ. 7 տողերից 6-ի սկզբնամասը հողմահարված ու ջարդված.

1. Ի ԿԱՄՍ Ա՝ՍՏՈՒԾՈ՝Ց ՄԵՔ՝ ՐՍ՝ՍԱՔ ՈՒ ՍԱՐԴ

2. ՐԻՄ՝ ՈՒ ԱՍԽԱԹԱՆ՝, ՈՐԴԻՔ ՇԱՀԱՆ

3. Ա, ՈՐԴՈՑ ՍԻՍԱՔ՝Ա՝ Վ՝ԱՄ՝Ն ՄԵՐ ԳԵՐԵԶՄԱ

---

[11] Նկատի ունի գյուղամիջյան սբ. Մինաս թեքակտուր եկեղեցին՝ կառուցված 1646թ.

[12] Դիվան...., պրակ II, էջ 88, № 87:

[13] Նույն տեղում, էջ 39, № 89:

[14] Նույն տեղում, էջ 26, № 44, 45:

4. ՚Ն՝ ԱՅՍ: Բ: (Զ) ՏՈՒՆ Տ՚Վ՝ ԱՔ Ս՚ՈՒՐ Բ ԱՌԱՔԵԼՈՅՍ:
5. ...ՀԱՐԻՆ ՈՐԴԻՔՆ՝ ԽԱՉՈՒԼՆ ԵՒ ՉՀ
6. ...ՉԱԼՄԱՑ
7. ...ՃԱՆ ՅԻՇԵՑԷՔ:

Վերջին երեք, համաձույլ երկու նվիրագրերը միջարկող տողերը պայմանականորեն կարելի է լրացնել. ՚ԹԱ՝ ՀԱՐԻՆ ՈՐԴԻՔՆ ԽԱՉՈՒԼՆ ԵՒ ՉՀ|՚ԱՍԱՆ ԵՒ՝ ՉԱԼՄԱՑ| ՚ԵՒ ՅԱԿՈՊ ՃԱՆ ՅԻՇԵՑԷՔ, չնայած սրանով էլ չի պարզվում նրանց առնչումը գործարքին: Առաջին տողի Սիսաք անվան վերականգնումը հիմնավորվում է թոռանվամբ, իսկ Ասխաթանը թերևս Կյուրիկյանների տոհմում տարածված Աղսարթան անձնանվան տեղայնացված հնչերանգն է: Կարևորը, անկասկած, այն է, որ պարզընկալ է այս սակավագեպ գործարքի իմաստը, այն է՝ Սիսաքի որդի Շահանի երեք զավակները՝ Սիսաք երկրորդը, Սարգիսն ու Ասխաթանը, Տաթևի վանքի սուրբ Առաքելոց (Պողոս-Պետրոս) եկեղեցուն ընծայել են: Բ: (երկու) տուն և գերեզմանատեղ ստացել Գր.Լուսավորիչ աղոթարանի պատի տակ: Հետևցնելի է, որ հնում ևս ցանկացած արգելված տեղում թաղման թույլտվություն կարելի էր կորզել՝ մուծելով պահանջվելիք գումարը: Նախանձ գրգռող նման պատիվը քչերին էր վիճակվում: Հենց Տաթևում պարսպից դուրս են թաղվել անվանի հոգևոր գործիչներ: Եվ, ո՛չ պատահաբար, հնարավոր վճռախախտումը կանխարդելելու միտումով, պայմանագրությունը փաստագրվել է կարծր, չջնջվող դավթարի վրա, ակնառու տեղում: Իսկ թե ինչպես մեկնել նվիրաբերված Բ տուն արտահայտությունը՝ երկմտելի է, քանզի այն հնարավոր է ըմբռնել ինչպես երկու սենյակ, բնակարան, արհեստանոց, կուղպակ, այնպես էլ ծուխ, գերդաստան, ընտանիք իմաստով:

Դառնանք քննարկված նվիրագրի չարակցություն երկրորդ սուրահին՝ գրված երեք քարերի վրա, 7 տողով, նախորդի հետ միաժամանակ.

1. ԱՅԼ ԵՒ ԵՍ՝ ԿԱՄՐԻԳԵԼՍ, ՈՐԴԻ ԱՐԵ՚Ի՝ ԲԱՐԱ, ՆԱԽԱՆՁ-
2. ԱՌՐ Ս՚ՈՒՐ Բ ՈՒԽՏԻՍ ՄԻԱԲԱՆ ԳՈԼ, ԵՏՈՒ ՉՀԱՍԱՆԱ
3. ՈՐԴԻՔՆ ԵՐԵՔԵԱՆ Ս՚ՈՒՐ Բ ԱՌԱՔԵԼՈՅՍ ԾԱՌԱ ՅԱՒ
4. ԻՏԵԱՆ, ԱՉԳԱՑ ՅԱՉԳ ԵՒ ՉՈՒՆԻ ՈՔ ՀՐԱՄԱՆ ԴԱՒԵԼ ԵՒ
5. ԹԷ ՈՔ ՅԱՆԴԳՆԵ՝ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԼԻՑԻ ԵՒ
6. ՅԱ՚ՍՈՒԾՄ Ց, ԵՒ ՅՈՒՐՈ ՍՐԲՈՑ ԱՆՄԱՄՆ ԵՒ ԲԱԺԻՆ ՉՅՈՒԴԱՒՆ Ա-
7. ՌՅԷ:Ի ԹՎ: ՉԿԵ (1316):

Այս դեպքում արդեն, Շահանի որդիների ձեռներեցությանը նախանձախնդիր Արևբարի որդին հպարտանում է, թե «ես՝ Կամրիգելս... ետու ՉՀասանա որդիքն երեքեան սուրբ Առաքելոցս ծառա յաւիտեան, ազգաց յազգ եւ չունի ոք հրաման դաւել» և ապա վճռախախտողներին սպառնում է խստագույն պատիժներով: Նկատենք, որ տների, խանութների, ձիթհանի, ջրի, ջրանցքի, մարդկանց, գյուղերի նվիրատվությունների մասին վիմագրերում բազում հաղորդումներ կան, սակայն տվյալ դիպվածն ավելի քան սակավագեպ է. Կամրիգելը[15] Հասանի երեք տղաներին թերևս գնել կամ իր իսկ գյուղացիներին, հարկատուներին տվել է «ծառա յաւիտեան,

[15] Գամրիկ, Գամրիկել անունը տարածված էր Եղվարդի Ազիզբեկյանների իշխանական տանը:

ազգաց յազգ» Տաթևի վանքին, որը մշտապես կարիք ուներ ծառայողների, մշակների, խաչնարածների:

Աներկբա է, որ այս հազվադեպ արտոնագրերը բացառիկ արժեք ունեն իրավական ու սոցիալական խճճված և մութ հարաբերությունների լուսաբանման խնդրում:

Այսքանով չի վերջանում Տաթևի վիմագրերի մասին ասելիքը. դեռևս 3 - 4 տասնյակ անտիպ վավերագրեր կան վանքի հողմահար ու գոսացած պատերին, որոնց հրապարակումը նպաստ կբերի այս բեղմնավոր կենտրոնի և համազգային պատմությանը:

ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ

Գյուղում հին արձանագրությամբ հուշարձաններ չկան, իսկ կարևորություն ունեցող վիմագրերից 12-ը հրատարակել է Ս.Բարխուդարյանը[16]: Դրանց առանձնապես նոր բան չավելացնելով հանդերձ, հարմար գտա հրատարակել մի քանի տապանագրեր ձորամիջի Անապատի բակից (ուր թաղված են Մխիթար Սպարապետն ու մեծ իշխան Բարխուդարը) և Կաթնաղբյուրի կառուցման վկայագիրը:

Տապանագրեր.

ա) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՐՔԻՍԻ|ՈՐԴԻ ՂԱԶԱՐԻՆ. Թ.Ո-ՂԹ (1650): Գուցե թե հարյուրավորը բաց է թողնված:

բ) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԼՔՈՆԻ ՈՐԴԻ|ՏԷՐ ՔԱՍՊԱՐԻՆ. ԹՎ. ՌՄԼԱ-ԻՆ Է (1782):

գ) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԷՐ ՊԱՂ|ԴԱՍԱՐԻ ՈՐԴԻ ՈՒՍ|ԴԱՑ ՈՒՀԱՆԻՆ.| ԹՎԻՆ ՌՄՂԴ-ԻՆ (1845):

դ) Ճեղքված բազալտով կամարակիր Կաթնաղբյուրի հարավային կողապատի սրբատաշ քարի վրա.

1819|ՅԻՇԱՏԱԿ Է| ԱԽԲԻՒՐՍ| ՄԱԼՈՒՆՑ ՏԷՐ| ՊԱՂՏԱՍԱՐ|Ի ՈՐԴԻ| ՀՈԲՈԴԱՑ| ՀՕԱՆԻՆ:

ԱՐԾՎԱՆԻԿ (Կապանի շրջան)

Գյուղի արևելակողմի լեռնաշղթայի եզրում բնության անկանգ հրոսումներին հրաշքով դիմակայում են ճեղքած քարով շարած հնամենի երիցավանքի (VI դ.) ավերակները: Հյուսիսակողմի ընդարձակ գերեզմանոցի շիրմաքարերից մեկի վրա կարդացվում է. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՋԷՎԵՅԻ ԵՍԱՒԱ| ԳՈՂԱԿԻՑ ՄԱՐԻԱՄԻՆ. ԹՎԻՆ ՌՄՀԶ (1827). որին առայժմ հայտնի միակ գրավոր խոսքն է վանքի տարածքում:

ՇՐՎԵՆԵՆՑ (Կապանի շրջան)

[16] Դիվան...., պրակ II, էջ 63 - 65:

Գյուղի կից միանավ սրահների տապանագրերից.
ա) ԹՎ.ՌԿԱ (1612):
բ) ԱՅՍ Է ՏԱՊԱՆ|ՂԱԶԱՐ ՊՕՂՈՍԵԱՆԻ, |ՈՐ ՎԱԽՃԱՆԵՑԱԻ 1911Թ. 2-ԻՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, |115 ԱՄԱՑ ՀԱՍԱԿՈՒՄ:
գ) ԱՍՏ ՀԱՆԳՋԻ ՈՒՍՏԱՑ|ԽԱՉԱՏՈՒՐ ՏԷՐ ՎԱ|ԴԱՆԵ՛ԱՆ՝. ՎԱԽՃԱՆՈՒԵՐ| 1901 ԱՄԻ 10 Ս՛ԵՊՏԵ՝ՄԲ՛ԵՐ Ա:

ՍԻՍԻԱՆ

Քաղաքի «Հացատան» բակի քարեղարանի պարույրաոլորք, խոլական եղջյուրներով խոյատապանների վրա (բերված Շաղաթից).

ա) Ի ԹՎ.ՌՃԲ (1653) ԷՐ.|ԵՍ՝ ՕՎԱՆԷՍ|Ս ԿԱԿՆԵՑՈՒ|ՑԻ ԱՅՍ ՔԱՐՍ ԻՄ ՈՐԴԻ ԻՍԱՑ|ԽԱՆԻՆ: Տողերը խառնիխուռն են, վերից-վար հաջորդաբար կարդալու դեպքում. կունենանք. Ի ԹՎ.ՌՃԲ ԷՐ|ԽԱՆԻՆ|որդի Իսայ| այս քարս իմ|ես Օվանէս|ս կակնեցու|ցի շարակցությունը:

բ) Ես՝ Մէլիքի որդի Աղէս գակնեցի| զդարանս եղբարն իմ Սարքիս|ին. ԹՎ. ՌՃԺ (1661): Անձնանունների գլխագրերն անգամ փոքրատառերով են:

Շինարարական աշխատանքների ընթացքում 1987Թ. Շաքի գյուղի մոտ հայտնաբերված (և Սիսիան տեղափոխված) բազալտե սարկոֆագի կափարիչին հնաոճ տառերով փորագրված է. Զ՛Տ՝ ԱՌԱ|ՊԵԱԼ ԳՐԻԳ|ՈՐԻ ՅԱՐՔԱԻ:

Ասել է, թե դագաղը Գրիգոր արքայինն է: Կարելի է կռահել, որ դա 1166Թ. տարօրինակ հանգամանքներում մահացած Բաղաց թագավոր Գրիգորն է, որի գերեզմանատեղը հայտնի չէ: Դագաղի վրա հիշատակագիրը անիմաստ է, սակայն արքայաճյունը ծածուկ հողարկավորողները մտորել են, թե երբևէ ի հայտ կգան թագավորի մասունքները և հավիտենական մոռացումից փրկելու համար վավերագրել են նրա անունը:

ՏՈԼՈՐՍ

Տաթևգէսը սնուցող Տոլորսի ջրամբարի հատակում մնացած եկեղեցիներն ու հուշակոթողները, ցավոք, ժամանակին ըստ հարկի չփաստագրվեցին, իսկ խաչքարերն ու այլ մանրամասներ տեղափոխվեցին Նոր Տոլորսի Հանգստարան: Իմ հավաքածուն չի ամբողջացնում այստեղի XIV-XIX դդ. վիմագրերը, որոնց թիվն անցնում է երեք տասնյակից: Սակայն նպատակահարմար է գիտական աշխարհին մատուցել գոնե 10 պատառիկ, որոնք հետաքրքիր են գյուղի պատմության նկատառումով:

Այժմ ջրի տակ թաղված, անկանոն բազալտով ու կրաշաղախով շարված, երկթեք լանջերի ներքո պարփակված եռանավ աղոթասրահի (20 X 10մ) հարավային մուտքի կիսաշրջան ճակատաքարի շինարարական ութատող արձանագրությունը հետևյալն է. ԿԱՌՈՒՑԱԻ Ս՛ՈՒՐ՛Բ ԵԿԵՂԵՑԻՍ| ՅԱՆՈՒՆ Ս՛Ր՛Բ՛ՈՒ՝ՀԻՈՅՆ ՀՌԻՓՍԻՄ|ԷԻ ԱՐԴԵԱՄԲՔ ԾԱԽՈՒՔ ՏՕԼՈՐՍԵՑ|Ի ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ ԿՈՂԱԿՑԻ|ՆՈՐԱ՝ ԹԱԶԱԿԻՒԼԻՆ, ԵՒ ՈՐԴԻՈՅ ԻՒՐՈՅ ԽԶ|ԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԵՒ

ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻԳՈՐԻՆ| ԵՒ ԿԱՆ,Ա,Ց՝ ՍԱՆԴԽՏՈՅ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԷԻ,| ՅԱՄՍ Տ՚ԵԱՌ՚Ն 1861-ԻՆ:

Սբ. Հռիփսիմե եկեղեցու հյուսիսային պատին ներքուստ ագուցված խաչքարի քիվին և խորանի տակ, 8 տող. ԵՍ ՄԷԼԻՔՍԷԹ ԷՐԷՑ,|ԿԱՆԿԵՑԱԻ Ս՚ՈՒՐ՚Բ ԽԱՉՍ| ՀԱՒՐ ԻՄՈՅ ՂՈՒՋԻՆ ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈՅ ՓԱՐԵԽԱՆԻՆ.| ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՋՋԵ|Ջ ՅԻՇԷ: ՓԱՇԱՀՈՒԹ,ԵԱՆ, ՇԱՀ|ԱՊԱՋԻՆ ԷՐ, ՋԱՐՋԱՐԱՆՔ| ՇԱ՚Տ՝ ՔԱՇԵՑԻ... Խոսքը վերաբերում է շահ Աբասի փաշայության (թագավորութեան) ժամանակներին, որը 1604 - 1605թթ. քիչ չարիքներ չպատճառեց նաև Սյունիքին:

Նույն պատին, նախորդից աջ. ԹՎ.Ռ (1551):

Բեկոր՝ մկրտության ավազանի դեմ. ԵՍ ՊԱՐԵՔՍ Կ՚Ա՚Ն՚ԿՆԵՑԻ՚| ՁԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄՈ:

Բեկոր. ԱՅՍ Է |ՏԱ|Պ|ԱՆ-ԻՆ. ՆՆՋԵՑՅԱՅԻ անունը չի լրացված: Հարավային պատի մեջ, քիվին. ՚ԵՍ ԳԵՐԵԿՍ ԿԱՆԳ,ՆԵ,ՑԻ ԽԱՉՍ:

Խաչքարեր գերեզմանոցում.

ա) ԹՎ. ՋԾ (1501).|ԵՍ ԹՈՐԱՅ|ՄԻՇՍ ԿԱԿԵՑ|Ի ՁԽԱՉՍ Ի| ՓՐԿՈՒԹԻ,ԻՆ,ՀՈԳՈՅ Հ|ԱՒՐՆ ԻՄՈՅ ԹԱՓՋԻՆ: Թերևս արհեստը, զբաղմունքը (թափչի-գործվածք լվացող, մաքրող) դարձել է հատուկ անուն:

բ) Ավելի քան երկու մետրանոց խաչքարի քիվին, խորանում, հարավային կողին, փոքր ու մեծ խառնիխուռն տառերով, դժվարընթեռնելի. ԵՍ ՄՈՒՐ՚Ա՚ՏՍ ԳԱՆԴԱՆԻ| ԿԱՆԿԵՑՈՒՑԻ ԽԱՉՍ ԻՇ,ԱՏԱԿ,.|ԱՂԱՅ|ԲԷԿ|ԻՆ, ՓԱՇ ԱՅԻՆ,| ԿՈՒԼԱՂ,Ա,Յ,Ի,|ԵՒ ԲԱԽՇԱ՚|ՎԱՄՆ...|... ԵՑԱՒ ՀՈԳՈՑ| Ի...՚Մ ՄՈՒՐԱԹԻՆ:| ՄՈՒՐԱՏ | ՏՂ,Ա, ՓԱՇԻՆ| ԲԷ|ՄՄ|: ԹՎ՚Ի՚Ն ՋՂ|Ը (1549). | ՚ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ: Թիվը և աստվածանունը չրջանակի բոլորքում են: Ջի հասկացվում՝ պարզ գրված ՙրանդանին տոհմանո՞ւն է թե տեղանուն և կամ ո՞ՆԻ նվաստ, չնչին իմաստը: Ճշգրտումների հարկ կա:

գ) ԿԱՄԱԻՆ Ա՚ՍՏՈՒԾՈՅ ԵՍ ՈՎԱՆ|ԷՍ ՔՐԱ՚Հ՚Ա՚Ն՚Ա՚|ԿԱԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐՆ|ԻՄ ԱԿԱՍԱՐԻՆ (Աղասա՞ր) |ԿՈՂ|ԱԿԻ|ՑՆ|ԱՆ|Ա:| ԹՎԿ.| Ռ|Թ (1580):

դ) Տապանաքարի ճակատին. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԹՈՐՕՍԻ ՈՐԴԻ|ԳԱՊՐԻԵԼԻՆ: Թ.ՌՄՂ-ԻՆ (1841):| ՅԻՇ՚Ա՚Տ՚Ա՚Կ է:

ԱՐԵՎԻՍ

Գյուղի հարավ-արևելյան բարձրագահ բլրի վրա, հեթանոսական միջավայրում տոկացող Թանահատաց վանքի (IVդ.) արձանագրություններից չորսը գիտական աշխարհին հայտնի են Ս.Բարխուդարյանի հրատարակությամբ[17]: Նույնքան էլ ներկայացվում են: Թաղակիր կամարաքարի վրա, ԳԻՐԳՈՐԻԿ, ԾԱՌ՚ԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ: Սա Թանատաց վանական Գրիգորիկ երեցն է, ըստ հիշատակապահ խաչքարի տեղեկատվության, մահացած ՆԼԵ (986) թվին[18]: Թաղի մաքրատաշ քարի վրա. ԴԱՒԻԹ| ՆՎԱՍՏ Ծ|ԱՌԱ Ա՚ՍՏՈՒԾՈՅ Ց:

---

[17] Նույն տեղում, էջ 96:

[18] Դիվան, II, էջ 96, № 276: Այս և հաջորդ քարերը ընկած են գետնին:

Հարավային պատին, մուտքից աջ, ստորին շարքի խաչանշանի վրա. ԱՆԴՐԵԱՍ: Բեմի ճակատանիստում դրված պատվանդանի վրա. Զ.Գ.Թ: (1254թ.) ԵՍ ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ, ՈՐ ԿԱՆԳՆԵՑԻ ՍՐՈՒՄԲ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍ ԶՈՒԳԱԿՑԻ ԻՄԻՄ ԵՒ ԻՆՁ: ՅԻՇԵԱ ՔՐԻՍՏՈՍ ՍԱՅԱԿԻԿԻ ՔՈՒՄ ԳԱԼԸՍՏԵԱՆ ԵՒ ՈՂՈՐՄԵԱՆ:

Սյունյաց աշխարհի IX-XVIII դդ. իրադարձությունների մասին քարագիր վավերագրեր էլի կան՝ չհավաստված մատենագրական աղբյուրներում, անհաղորդ՝ բանասերներին: Հարկ է փութալ ժողովել-վավերագրելու դրանք:

НОВОВЫЯВЛЕННЫЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ

С.Т.САГУМЯН

Резюме

До сегодняшнего дня выявлено более чем 10000 лапидарных надписей исторической Армении, однако расшифровка и издание более 30000 надписей остаются актуальной задачей для арменоведения. Выявленные нами 55 неопубликованных надписей из Сюникской области представляют собой значительный интерес для изучения истории этой области.